



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2017 թվականի երկրորդ եռամսյակում (վերլուծություն)

2017 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 42579 գործարք, որոնց քանակը 2017 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 18.5 %-ով, իսկ 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 4.2 %-ով:

2017 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 12144 օտարման գործարքի 72.7 %-ը կազմել է առուվաճառքը, 27.0 %-ը՝ նվիրատվությունը և 0.3 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 42.2 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.4 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2017 թվականի երկրորդ եռամսյակում, 2017 թվականի առաջին եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 27.0 %-ով, իսկ 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 7.3 %-ով:

2017 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 61.8 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2017 թվականի երկրորդ եռամսյակում, 2017 թվականի առաջին եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 33.3 %-ով, իսկ 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 22.4 %-ով:

2017 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Երկրորդ եռամսյակ 2016 թ.	Երկրորդ եռամսյակ 2017 թ.	Առաջին եռամսյակ 2017 թ.
Կենտրոն	428100	442800	428250
Արաբկիր	357100	337000	357300
Քանաքեռ-Զեյթուն	283100	268700	279200
Նոր Նորք	254200	233300	252600
Ավան	261600	250200	259500
Էրեբունի	252300	238000	248300
Շենգավիթ	257600	240000	254300
Դավթաշեն	276700	250100	273200
Աջափնյակ	251000	231500	249000
Մալաթիա-Սեբաստիա	244050	230000	241000
Նուբարաշեն	157300	156000	157700
Միջինը Երևանում (բացի Նորք-Մարաշից)	274800	261600	272800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2017 թվականի երկրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով, 2017 թվականի առաջին եռամսյակի համեմատ նվազել են 4.1 %-ով:

2017 թվականի երկրորդ եռամսյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 894 բնակարան, որի քանակը, 2017 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 5.9 %-ով, իսկ 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 1.4 %-ով:

2017 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		Երկրորդ եռամսյակ 2016 թ.	Երկրորդ եռամսյակ 2017 թ.	Առաջին եռամսյակ 2017 թ.
Արագածոտն	Աշտարակ	116050	106700	114700
	Ապարան	58400	58900	58800
	Թալին	66800	62400	65700
Արարատ	Արտաշատ	98800	92000	98100
	Մասիս	115800	102700	114800
	Վեդի	101700	90000	101650
	Արարատ	77500	77850	77850
Արմավիր	Վաղարշապատ	154200	132300	154100
	Արմավիր	121250	103350	121150
	Մեծամոր	87600	78000	87000
Գեղարքունիք	Սևան	99400	81800	95600
	Գավառ	60550	53700	60200
	Մարտունի	107700	106700	105500
	Վարդենիս	45250	45900	45400
	Ճամբարակ	28750	28800	28800
	Վանաձոր	88600	84700	88600
Լոռի	Ստեփանավան	74750	69300	74900
	Սպիտակ	99850	92300	98300
	Ալավերդի	55800	49700	55950
	Տաշիր	47400	47400	47400
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20500	23700	20500
	Աբովյան	155150	148400	154400
Կոտայք	Նոր Հաճն	128550	120000	128000
	Բյուրեղավան	108250	94400	106500
	Եղվարդ	109850	103600	109400
	Հրազդան	63900	57300	63300
	Ծաղկաձոր	292400	289500	292400
	Չարենցավան	85500	75300	84700
	Գյումրի	109450	93800	109400
Շիրակ	Արթիկ	67250	67600	67500
	Մարալիկ	41050	41500	41150
	Գորիս	123650	124200	124200
Սյունիք	Կապան	95000	95700	95900
	Սիսիան	92200	89700	91900
	Մեղրի	82950	86900	84000
	Քաջարան	94900	97400	95400
	Դաստակերտ	8000	8000	8000
	Վայք	95100	92300	94400
Վայոց ձոր	Եղեգնաձոր	126200	121500	126450
	Ջերմուկ	113200	102700	112800
	Դիլիջան	115500	107000	115100
Տավուշ	Իջևան	118550	111800	117400
	Բերդ	60450	61100	60600
	Նոյեմբերյան	50400	50700	50600
	Այրում	31850	31900	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2017 թվականի երկրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2017 թվականի առաջին եռամսյակի համեմատ նվազել են 5.4 %-ով:

2017 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 1006 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 322 գործարք, մարզերում՝ 684 գործարք: 2017 թվականի երկրորդ եռամսյակում, 2017 թվականի առաջին եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 9.7 %-ով, ընդ որում, Երևանում՝ 23.4 %-ով, մարզերում՝ 4.3 %-ով, իսկ 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 1.6 %-ով, ընդ որում, Երևանում՝ 1.9 %-ով, իսկ մարզերում՝ 1.5 %-ով:

2017 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Երկրորդ եռամսյակ 2016 թ.	Երկրորդ եռամսյակ 2017 թ.	Առաջին եռամսյակ 2017 թ.
Կենտրոն	476200	476000	476350
Արաբկիր	383100	380000	383100
Քանաքեռ-Զեյթուն	295000	283700	293500
Նորք-Մարաշ	319200	300000	315400
Ավան	270500	262300	269000
Էրեբունի	239750	234500	239600
Շենգավիթ	255000	230000	252000
Դավթաշեն	276000	268700	274000
Աջափնյակ	250100	241700	249500
Մալաթիա-Սեբաստիա	238100	234700	238100
Նուբարաշեն	150800	150000	150800
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	286700	278300	285600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2017 թվականի երկրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի առաջին եռամսյակի համեմատ նվազել են 2.6 %-ով:

2017 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ շինության 1 մ² մակերեսի հաշվարկով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)
--------	----------	--------------------

		Երկրորդ եռամսյակ 2016 թ.	Երկրորդ եռամսյակ 2017 թ.	Առաջին եռամսյակ 2017 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	132000	135800
	Ապարան	60050	53700	60000
	Թալին	69250	66600	68800
Արարատ	Արտաշատ	100000	97400	100100
	Մասիս	115100	110800	115100
	Վեդի	102300	90600	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	150100	153150
	Արմավիր	107000	102000	107000
Գեղարքունիք	Սևան	94950	92950	94950
	Գավառ	57100	54100	57100
	Մարտունի	96100	95100	96200
	Վարդենիս	41150	41150	41150
	Ճամբարակ	31100	31400	31100
	Վանաձոր	100900	99500	100600
Լոռի	Ստեփանավան	91200	85300	90800
	Սպիտակ	114000	109400	113700
	Ալավերդի	50200	50400	50300
	Տաշիր	51900	45300	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157300	159900	157350
	Նոր Հաճն	129800	126000	129500
	Բյուրեղավան	120500	110300	119700
	Եղվարդ	116100	109700	115400
	Հրազդան	82600	72000	81400
	Ծաղկաձոր	305000	300300	305000
	Չարենցավան	83000	80000	82000
Շիրակ	Գյումրի	119250	117500	119250
	Արթիկ	63450	60400	63400
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	128700	130050
	Կապան	100700	100650	100800
	Սիսիան	96500	95500	96500
	Մեղրի	84600	85300	84800
	Դաստակերտ	11610	11810	11610
Վայոց ձոր	Վայք	90150	88200	89400
	Եղեգնաձոր	116750	114300	116200
	Զերմուկ	131300	129300	130900
Տավուշ	Դիլիջան	115600	113200	115850
	Իջևան	123200	120500	123200
	Բերդ	60100	57000	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին

գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի առաջին եռամսյակի համեմատ նվազել են 2.9 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2017 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել է 3948 միավոր (3202.00 հա) հող, որից Երևանում՝ 335 միավոր (23.73 հա): Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 2278 միավոր (2986.19 հա), որից Երևանում՝ 29 միավոր (4.72 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 1185 միավոր (96.34 հա), որից Երևանում՝ 185 միավոր (6.93 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 380 միավոր (24.50 հա), որից Երևանում՝ 115 միավոր (11.63 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 51 միավոր (14.04 հա), որից Երևանում՝ 6 միավոր (0.45 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 27 միավոր (73.06 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 25 միավոր (7.49 հա),
- ջրային հող՝ 2 միավոր (0.38 հա):

2017 թվականի երկրորդ եռամսյակում օտարված հողերից 3224 միավորի (2837.81 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 293 միավոր (17.82 հա), նվիրատվության գործարք՝ 705 միավոր (339.51 հա), որից Երևանում՝ 34 միավոր (5.82 հա) և փոխանակության գործարք՝ 19 միավոր (24.68 հա), որից Երևանում՝ 8 միավոր (0.09 հա):

Հանրապետությունում 2017 թվականի երկրորդ եռամսյակում, 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 1.5 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 6.4 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել է 9.3 %-ով, իսկ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 48.5 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 773.11 հա, որից 757.53 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 18.7 %-ը կամ 602 միավորը (678.48 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 83 միավոր (2.87 հա), իսկ 80.2 %-ը կամ 2587 միավորը (2158.95 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 204 միավոր (14.89 հա): 2017 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է կառուցապատման իրավունքի վաճառքի 35 գործարք (0.38 հա):

Ստորև ներկայացված է 2017 թվականի երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակ. կառուցապ. հողեր						բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակ. կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	1	0.004	35	0.91	47	1.96	23	3.39	5	0.45	125	5.04	51	6.01
Արագածոտն	32	154.11	1	0.01	2	0.04	4	0.02	188	431.68	0	0.00	54	7.02	3	0.40
Արարատ	28	45.05	3	0.20	12	1.35	9	0.58	283	123.94	1	0.01	137	12.28	16	0.27
Արմավիր	9	6.36	4	2.02	2	0.13	6	0.07	225	751.16	1	0.03	130	12.86	5	0.14
Գեղարքունիք	4	1.36	3	2.11	21	2.07	26	1.13	147	59.37	6	0.28	48	4.94	10	0.26
Լոռի	2	0.35	3	1.85	16	0.16	25	1.25	230	199.44	3	0.98	21	2.36	17	0.74
Կոտայք	23	26.42	2	0.54	62	1.20	18	1.15	323	183.54	3	0.29	171	15.22	24	1.15
Շիրակ	7	6.92	3	0.25	14	1.03	9	0.11	98	97.29	1	0.60	20	1.55	6	0.09
Սյունիք	3	2.70	4	0.72	12	0.48	10	1.16	56	43.12	0	0.00	23	1.79	2	0.07
Վայոց ձոր	60	390.18	0	0.00	2	0.14	8	0.11	45	168.99	0	0.00	7	0.63	5	0.19
Տավուշ	24	14.34	5	3.12	16	0.52	9	0.14	36	13.03	0	0.00	16	2.07	8	0.57
Ընդամենը	192	647.79	29	10.82	194	8.03	171	7.68	1654	2074.95	20	2.64	752	65.76	147	9.89

Ստորև ներկայացված է 2017 թվականի երկրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)		
Երևան	50	0.81	0	0.00	27	0.31	23	0.50	33	2.064	0	0.00	1	0.004	8	0.60	24	1.46
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	39	154.18	32	154.11	1	0.01	2	0.04	4	0.02
Արարատ	6	0.38	1	0.06	1	0.01	4	0.31	44	45.62	26	43.86	2	0.14	11	1.35	5	0.27
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	21	8.58	9	6.36	4	2.02	2	0.13	6	0.07
Գեղարքունիք	13	0.43	1	0.25	2	0.07	10	0.11	39	5.23	2	0.36	2	1.86	19	1.99	16	1.02
Լոռի	17	1.97	2	1.84	7	0.06	8	0.07	29	1.64	2	0.35	1	0.01	9	0.10	17	1.18
Կոտայք	25	0.73	1	0.50	23	0.21	1	0.02	78	27.68	21	25.51	1	0.05	39	0.99	17	1.13
Շիրակ	6	0.13	0	0.00	3	0.11	3	0.02	24	8.08	4	6.82	3	0.25	11	0.92	6	0.09
Սյունիք	4	0.008	0	0.00	3	0.005	1	0.003	25	5.06	3	2.70	4	0.72	9	0.48	9	1.16
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	70	390.43	60	390.18	0	0.00	2	0.14	8	0.11
Տավուշ	9	0.25	0	0.00	7	0.24	2	0.01	45	17.86	24	14.34	5	3.12	9	0.27	7	0.13
Ընդամենը	130	4.71	5	2.65	73	1.02	52	1.04	447	666.42	183	644.59	24	8.18	121	7.01	119	6.64

2017 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 9 գործարք (3.21 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2017 թվականի երկրորդ եռամսյակում, 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 12.4 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 5.7 %-ով, իսկ մարզերում՝ 12.9 %-

ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 3.2 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 18.2 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 24.7 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 60.0 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի երկրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գներ՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Ստավելագույն	Միջին			Նվազագույն	Ստավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	30	152.26	40.3	830.5	455.9	97	105.64	365.0	12000.0	3368.6
Ապարան	2	1.85	70.1	525.6	297.9	4	1.78	86.5	2727.3	635.1
Թալին						67	280.35	93.6	5494.5	684.3
Ծաղկահովիտ						12	33.01	79.5	1000.0	441.3
Արարատի մարզ										
Արտաշատ	17	10.55	77.8	3428.6	834.5	156	46.58	335.1	10833.3	2679.3
Մասիս	4	12.62	60.5	514.9	240.4	52	36.61	200.0	11904.8	3427.7
Վեդի	5	20.69	61.3	1000.0	289.7	74	40.44	207.0	10795.1	1991.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	5	1.42	84.5	935.8	421.3	108	69.67	294.3	9090.0	1472.2
Բաղրամյան	2	3.77	70.9	2015.8	1043.4	44	616.21	90.6	2561.1	827.6
Վաղարշապատ	2	1.17	171.1	2219.3	1195.2	69	31.92	444.4	11764.7	2035.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						117	32.29	199.8	1875.0	531.5
Ճամբարակ						1	0.32	60.5	953.3	352.0
Մարտունի	1	0.32	127.6	127.6	127.6	8	1.97	51.1	2850.0	743.5
Սևան						1	0.03	52.2	2134.8	360.0
Վարդենիս	1	0.04	1757.6	1757.6	1757.6	17	24.37	41.2	2575.1	355.4
Լոռու մարզ										
Ալավերդի						16	11.42	170.4	6424.2	544.7
Գուգարք						7	5.89	234.6	6065.9	821.7
Սպիտակ	2	0.35	163.5	1050.0	606.8	15	6.28	250.0	5555.5	658.3
Ստեփանավան						29	22.43	90.6	1686.6	420.2
Տաշիր						159	146.83	45.3	1384.4	186.7
Կոտայքի մարզ										
Աբովյան	6	14.78	87.5	917.0	378.3	112	23.56	279.3	11942.7	3963.7
Եղվարդ	9	5.66	218.9	1363.1	988.4	159	96.96	174.4	11971.8	2582.7
Հրազդան	6	5.06	131.0	825.0	622.4	50	59.90	130.5	10256.4	1086.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	1.93	132.1	132.5	132.3	32	35.91	252.0	1693.1	710.2
Ամասիա						2	9.10	40.9	261.0	144.5
Անի						26	30.18	110.6	546.9	467.0
Աշոցք								58.5	215.8	142.0
Արթիկ	2	4.89	986.5	1000.0	993.3	22	16.87	79.4	1428.6	556.7
Սյունիքի մարզ										
Գորիս						5	8.14	92.6	1023.2	706.7

Կապան						3	1.42	120.0	841.6	462.5
Մեղրի						8	3.23	193.0	3000.0	844.0
Սիսիան	3	2.70	131.3	1127.5	463.7	35	27.53	46.3	1977.4	532.3
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	55	385.88	20.7	2607.2	486.0	33	165.15	125.0	10000.0	1819.5
Վայք	5	4.30	66.0	66.0	66.0	9	3.05	58.8	1430.7	640.0
Տավուշի մարզ										
Բերդ						21	5.55	213.3	3783.8	725.0
Իջևան	23	13.96	141.0	2400.0	827.7	3	1.88	267.5	9454.5	1673.3
Նոյեմբերյան	1	0.38	306.9	306.9	306.9	11	5.41	46.7	7368.4	1029.8

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2017 թվականի երկրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գներ՝ 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Մտավելագույն	Միջին			Նվազագույն	Մտավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	383.0	2301.0	3088.9	2695.0	35	35196.3	130.7	22200.0	2586.3
Ապարան						6	13440.0	124.1	609.6	389.4
Թալին						9	16859.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						2	3830.0	60.0	214.3	95.0
Արարատի մարզ										
Արտաշատ	10	12887.9	357.0	855.0	484.3	27	29797.1	173.9	7140.3	902.3
Մասիս	1	570.0	666.7	666.7	666.7	82	62101.6	187.5	25000.0	1203.0
Վեդի						28	30872.0	126.1	5000.0	663.5
Արմավիրի մարզ										
Արմավիր						47	53119.0	131.6	9090.9	1216.0
Բաղրամյան						6	7200.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	2	1262.0	2014.5	7656.0	4835.3	76	66956.0	197.4	26528.4	1530.4
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	16	18843.6	51.8	124.4	88.7	4	2977.0	186.6	1084.3	683.8
Ճամբարակ	1	28.2	369.3	369.3	369.3	2	3825.0	71.3	2286.2	147.0
Մարտունի	1	1000.0	112.6	112.6	112.6	30	27728.7	119.3	5000.0	277.3
Սևան	1	33.8	1398.3	1398.3	1398.3	4	3924.0	240.0	3110.4	349.0
Վարդենիս						7	10015.4	72.5	987.2	150.5
Լոռու մարզ										
Ալավերդի	6	400.9	2625.0	3150.0	2887.5	4	2740.0	114.3	1388.9	217.0
Գուգարք	3	592.7	2105.8	4750.5	3363.7	8	10627.0	77.9	14083.3	1259.0
Սպիտակ						6	7980.0	104.9	1348.3	198.3
Ստեփանավան						1	773.2	88.2	1666.7	176.0
Տաշիր						1	39.8	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	28	6038.8	897.6	5697.4	3734.8	93	76654.6	264.5	35353.5	1956.2
Եղվարդ	10	3509.1	244.4	1941.5	1148.5	64	62535.9	173.6	27000.0	2851.8
Հրազդան	1	340.0	2201.9	2201.9	2201.9	9	7200.0	117.7	34848.5	1317.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	8	2877.3	233.0	4408.2	3108.9	10	9434.6	113.6	18750.0	333.5
Ամասիա								45.3	274.7	72.0

Անի						2	1615.3	67.9	180.6	218.0
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ	3	6367.8	122.1	244.4	162.9	8	4443.8	111.8	5000.0	217.3
Սյունիքի մարզ										
Գորիս						2	1435.2	112.2	1700.0	369.0
Կապան	7	3291.9	54.5	2400.0	1111.3	5	4819.3	67.9	2638.9	376.7
Մեղրի						5	3000.0	68.5	632.9	271.0
Սիսիան	2	1500.0	367.2	580.8	478.5	7	6626.0	123.5	875.0	263.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	2	1379.6	704.2	748.3	726.3	5	3410.0	96.7	7659.6	506.0
Վայք						1	1770.0	120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ						3	2423.8	75.8	810.0	131.0
Իջևան	6	1767.2	581.2	3000.0	1831.9	13	18259.0	74.1	14423.1	483.0
Նոյեմբերյան	3	954.7	891.1	2200.0	1872.4			125.0	1948.1	259.0

2017 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2045 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.8 %-ը:

2017 թվականի երկրորդ եռամսյակում, 2017 թվականի առաջին եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 4.3 %-ով, իսկ 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 3.5 %-ով:

2017 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 89 բնակարանի, 82 անհատական բնակելի տան, 920 հասարակական նշանակության, 474 արտադրական նշանակության օբյեկտի, 466 միավոր հողի, 1 այգետնակ և 13 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2017 թվականի երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 14 վարձակալության գործարքի քանակը 2017 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 2.0 անգամ, իսկ 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ նվազել 39.1 %-ով:

2017 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 2288.50 հա հողից 3.32 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 2285.18 հա հողից 1815.00 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 308.50 հա արդյունաբերական օբյեկտի, 8.10 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտի հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց ձորի մարզում՝ 541.85 հա, որից 540.66 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6051 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 14.2 %-ը: Գրավադրման գործարքից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2017 թվականի առաջին եռամսյակի համեմատ, աճել է 28.9 %-ով, իսկ 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 10.2 %-ով: Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (51.3 %), անհատական բնակելի տների (21.1 %), հասարակական նշանակության օբյեկտների (13.3 %) և հողերի (8.2 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3664 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների

քանակը, 2017 թվականի առաջին եռամսյակի համեմատ, աճել է 38.9 %-ով, իսկ 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 22.0 %-ով:

2017 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել է 589.38 հա հող, որից 15.58 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 94.0 %-ը կամ 553.92 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.56 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր գրավադրվել են Արմավիրի մարզում՝ 278.58 հա, որից 277.20 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 576 գործարք, որից 455-ը՝ Երևանում: 2017 թվականի առաջին եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 62.7 %-ով, ընդ որում Երևանում՝ 82.0 %-ով, մարզերում՝ 16.3 %-ով, իսկ 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ աճել է 24.4 %-ով, ընդ որում Երևանում՝ 56.4 %-ով, մարզերում՝ նվազել 29.7 %-ով:

2017 թվականի երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 5350 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որի քանակը, 2017 թվականի առաջին եռամսյակի համեմատ աճել է 5.1 %-ով, իսկ 2016 թվականի երկրորդ եռամսյակի համեմատ՝ 2.0 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 12.6 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (18.5 %):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե